# ԳԱ ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանի 80-ամյակի առթիվ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ առաջիկա օրերին կանցկացվեն մեծարման հանդիսավոր երեկոներ՝ նվիրված վաստակաշատ ակադեմիկոսին:

Սեպտեմբերի 17-ին, ժամը 19-ին, Մայր աթոռ սբ. Էջմիածնի վեհարանում տեղի կունենա «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» դասվո շքանշանով նրան պարգեւատրելու հանդիսությունը:

Նրա ծննդյան օրը՝ սեպտեմբերի 18-ին, ԳԱ ակադեմիայի դահլիճում կհավաքվեն պետական ու գիտական այրերը՝ հոբելյարին շնորհավորելու ու հարգանքի տուրք մատուցելու:

Թեքեյան մշակութային միությունը նույնպես հանդիսավորությամբ կնշի ակադեմիայի նախագահի ծննդյան տարեդարձը՝ սեպտեմբերի 22-ին, ժամը 14-ին:

Սբ. Էջմիածնում տեղի ունենալիք հանդիսությանը մասնակցել ցանկացողների համար ավտոբուսը Էջմիածին կշարժվի Արամ Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահի առջեւից, ժամը 18:00-ին:

